



ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
Национальное Собрание Государство Западной Армении
National Assembly of Western Armenia State

<http://gouvernement.wix.com/parlament> , Email : a.g.b76 @mail.ru , Tel. +4915770358325

N0018

15.04.2016թ.

Ազգային հերոս գեներալ Արկաղի Տեր-Թադևոսյանին

Հայ ժողովրդի պատմության մեջ շատ են այն հրամանատարները, ովքեր վճռական պահին ծանր պատասխանատվություն են վերցրել իրենց ուսերին: Այդպիսին են նաև մեր ժամանակակից հայ ռազմիկ հրամանատարները: Փառք ու Պատիվ բոլոր նրանց, ովքեր 25 տարի անընդմեջ զինվորների հետ կատարել և կատարում են իրենց վստահված գործը:

Մեր հզորագույն նախնյաց ազգադիր Հայկ Նահապետի և պետականադիր Արամ Նահապետի ռազմաքաղաքական համակարգի գաղափարակիրների եւ արժանի ժառանգորդների միավորումը գործության նոր աստիճանի կբարձրացնի մեր հաղթական կամքը: Մենք վստահ ենք՝ Ձեր Գոչը կհամախմբի ողջ հայ ազգին, Քաջարիներին:

Հարգելի ազգային հերոս գեներալ Արկաղի Տեր-Թադևոսյան, Դուք Ձեր գործունեությամբ Միացյալ Հայքի համար դրել եք այն հիմնաքարը, ինչ արել էր Կուսուրովը 19-րդ դարում Ռուսաստանի համար, Շառլ դը Գոլը 20-րդ դարում՝ ֆրանսիացիների համար:

Արևմտյան Հայաստան Պետության (ԱՀՊ) Վտարանդի Կառավարությունը, ԱՀՊ Ազգային Ժողովը, ԱՀՊ Իրավարար Ատյանը, Գիտությունների Համահայկական Միջազգային Ակադեմիան իրենց զորակցությունն են հայտնում Ձեզ և պատրաստակամ են իրենց կարողությունների շրջանակներում աջակցել Ձեր ծրագրի կենսագործմանը:

Մենք գիտակցում ենք՝ պատերազմը և խաղաղությունը հայ ռազմիկի և նրա թիկունքը ապահովող մեր ժողովրդի ձեռքերում են՝ Հայաստանում թե՛ արտերկրում: Մեր բոլոր հաղթանակները բացառապես միաբանության և քաջության արդյունք են:

Եվ երբ ամեն մեկը կերտում է իր բաժին հաղթանակը, առաջին հերթին այն նվիրում է բոլորիս և այդպես հզորանալով հաղթեցինք Արցախյան պատերազմում:

Մենք հաղթեցինք ոչ միայն ռազմի դաշտում :

Հայ ժողովուրդը սպասում էր համազգային այս Կոչին: Ուրախ ենք, որ Կոչը Դուք հնչեցրեցիք: Վստահ ենք՝ յուրաքանչյուր հայ, որպես միասնականության և կամքի արտահայտության դրսևորում, պարտավոր է միանալ Ձեր Կոչին անկախ իր բնակության վայրից և իր տեղում կենսագործել մեր միասնական իրավունքները:

Մենք Ձեզ հետ ենք:

Հարգանքներով՝

**ԱՀՊ ՎԿ վարչապետ՝ Ա. Մկրտչյան
Գերմանիա**



**ԱՀՊ ԱԺ նախագահ՝ Տ. Բազրատունի
Գերմանիա**

A blue ink signature in cursive script.



**ԱՀՊ Իրավարար Ասյան՝ Ա. Մանարյան
Հայաստան**

**Գիտությունների Համահայկական Միջազգային Ակադեմիայի քարտուղար՝
Վ. Մեսրոպյան
ԱՄՆ**